ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հ. Վ.

1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբին Անդրկովկասում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք վճռական ազդեցություն ունեցան երկրամասի, մասնավորապես Հայաստանի քաղաքական ճակատագրի վրա: Ռուսաստանում իշխանությունը գրաված բոլշևիկները հաշտության բանակցություններ էին վարում Գերմանիայի հետ, իսկ Թուրքիայի արևելյան ռազմաճակատում պատերազմի իրավունքով գրավված տարածքներից ռուսական զորքերը հեռանում էին: Անդրկովկասը հայտնվել էր օրըստօրե սաստկացող թուրքական սպառնալիքի դեմ հանդիման: Սպառնալիքը չուշացավ: Խախտելով 1917թ. դեկտեմբերի 5-ի Երզնկայի զինադադարի համաձայնագիրը՝ թուրքական բանակը, Վեհիբ փաշայի հրամանատարությամբ, շարժվեց դեպի Անդրկովկաս՝ պատրվակ բռնելով գրաված տարածքներում թուրքահպատակ մահմեդական բնակչության հանդեպ հայերի գործադրած բռնությունները: Դրա հետ մեկտեղ, օսմանյան կառավարությունը հունվարին իր հրամանատարության միջոցով դիմեց անդրկովկասյան կառավարությանը՝ Թուրքիայի և Անդրկովկասի միջև խաղաղ հարաբերություններ հաստատելու համար: Անդրկովկասյան սեյմն անմիջապես գործի անցավ. անհրաժեշտ էր մշակել ներկայացվելիք պայմանները, կազմել պատվիրակություն: 1918 թ. փետրվարի 16-ին սեյմը միաձայն ընդունեց այն ծրագիրը, որով պիտի առաջնորդվեին սեյմի պատվիրակները Տրապիզոնում Թուրքիայի հետ բանակցելիս. «Հաշտությունը պետք է լինի վերջնական, երկու կողմերի միջև պետք է պահվեն 1914 թ. սահմանները, Արևելյան ժողովուրդներին՝ հայերին, ասորիներին, լազերին, պետք է տրվի ինքնավարություն Թուրքիայի վեհապետության ներքո»[1],- ասվում էր այնտեղ: Այս նիստում Ն. Ռամիշվիլին իր ելույթում հատուկ կանգ առավ Արևմտյան Հայաստանի բարենորոգման խնդրի վրա: Ըստ նրա՝ «Տաճկահայաստանի կարգավորման հարցը» և հայ ժողովրդի իրավունքներն «ամրապնդված են հայ ժողովրդի բազմադարյան պայքարով, ընդդեմ այն հարստահարման, որին այդ ժողովուրդը ենթարկված է եղել Թուրքիայի կայսրության սահմաններում»[2]: Նա հայտարարում է, թե «Տաճկահայկական հարցի լուծումով… ոչ նվազ չափով շահագրգռված են նույնպես Անդրկովկասի ժողովուրդները»[3]: Այս բոլորով հանդերձ, հակառակ սեյմի ընդհանուր տրամադրության և Ն. Ռամիշվիլու

[1] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 81:
[2] Նույն տեղում, էջ 81, **Ավետիսյան Հ. Ա.,** Հայկական հարցը 1918թ, Ե., 1997, էջ 89 – 90:
[3] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 81 – 82:

հուսատու արտահայտությունների, սեյմի վավերացրած առաջարկվելիք պայմանների մեջ վճռական ոչինչ չկար Թուրքահայաստանի իրավունքների մասին: Այստեղ միայն նշվում էր, թե կնքվելիք պայմանագրի հիմքը պիտի կազմի պատերազմից առաջ գոյություն ունեցած թուրք-ռուսական սահմանների վերահաստատումը: Սեյմի հայ ներկայացուցիչները բավարարված չէին, բայց որոշել էին համաձայնվել, քանի որ առանձնանալ և առանձին պայքար մղել՝ կնշանակեր վտանգի ենթարկել հայ ժողովրդին: Փետրվարի 16-ի նիստում հաստատվեց նաև պատվիրակության կազմը՝ Մ. Հաջինսկի, Խ. Խասմամեդով, Գ. Աբաշիձե, Ս. Չիկալին, Ա. Շեյխ-ուլ-Իսլամով, Ի. Հայդարով, Գ. Գվազավա, Գ. Լասխիշվիլի, Մ. Մեհթիև և այլք, նախագահ՝ Ա. Չխենկելի[4]: Պատվիրակության հայ անդամներն էին՝ Հ. Քաջազնունին և Ա. Խատիսյանը, իսկ Ռ. Տեր-Մինասյանը և պատմաբան Լեոն որպես խորհրդականներ պիտի ուղեկցեին նրանց: Հաշտության խորհրդաժողովի գլխավոր նյութը լինելու էր Թուրքահայաստանը, որի շահերի պաշտպանությունը, վրացիների և թաթարների համար կարևորություն չուներ: Ինչպես Ա. Խատիսյանն էր վկայում, Ա. Չխենկելու ընտրությունը, որպես պատվիրակության նախագահի, ինքնին այդ անտարբեր վերաբերմունքի ապացույց էր: Ա. Չխենկելին, հակառակ Ե. Գեգեչկորու, ռուսամետ չէր և շատ հարցերում թուրքական կողմնորոշում էր ցուցաբերել[5]: Ինչպես պարզվեց հետագայում, նա բանակցությունը վարում էր՝ միայն վրացական շահերը նկատի ունենալով: Անդրկովկասի պատվիրակությունը պատրաստ էր մեկնելու Տրապիզոն, երբ փետրվարի 17-ին ռուսական հաշտարար պատվիրակության քարտուղար Լ. Կարախանից հեռագիր ստացվեց: Նրանում հայտնվում էր, թե հաջորդ օրը Բրեստ-Լիտովսկում պիտի ստորագրվի հաշտության պայմանագիր, որի համաձայն, Բաթումը, Կարսն ու Արդահանն անցնում են Թուրքիային: Օսմանյան կառավարության հետագա քայլերի մասին տեղեկություն չունենալով՝ պատվիրակությունը ստիպված էր մնալ Թիֆլիսում: Միայն փետրվարի 22-ին Տրապիզոնի ամրացված շրջանի պետ գեներալ Կոլոսովսկուց ստացված հաղորդագրության հիման վրա, թե թուրքական պատվիրակությունն այդ օրն իսկ հասնելու է Տրապիզոն, անդրկովկասյան պատվիրակությունը մեկնեց Բաթում: Այնտեղից «Կարլ թագավոր» հածանավով պատվիրակությունը գնաց Տրապիզոն, ուր հասավ փետրվարի 24-ի երեկոյան: Տեղ հասնելուն պես պատվիրակությունը հաղորդեց Կ. Պոլիս, որ սպասում է թուրքական պատվիրակությանը: Սակայն, մի քանի օր պատասխան չեկավ, և պատվիրակությունը մինչև փետրվարի 27-ը մնաց նավի վրա, որովհետև տեղական կուսակալը պահանջում էր զինաթափել պատվիրակությանը Բաթումից ուղեկցող 50 հոգանոց պահակախումբը: Թուրքերը գտնում էին, որ անդրկովկասյան պատվիրակությունն իրենց հյուրն է և նրան չեն կարող ուղեկցել զինված մարդիկ: Իսկ անդրկովկասյան պատվիրակությունն այն

---

[4] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ.Պ-200, ց. 1, գ. 9, թ. 45-46:

[5] **Խատիսյան Ալ.,** Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 37:

տեսակետին էր, թե Տրապիզոնը չեզոք կետ է, որն իրավաբանորեն չի պատկանում ո՛չ Ռուսաստանին, ո՛չ էլ Թուրքիային, ուստի և պատվիրակությունը չի կարող կաշկանդվել սահմանափակող բնույթ կրող որևէ պայմանով[6]: Այս առումով ուշագրավ է Հ. Քաջազնունու՝ Տրապիզոնից իր կնոջը՝ Սաթենիկին, 1918թ. մարտի 10-ին ուղղած նամակը, որում նկարագրվում է ստեղծված իրավիճակը. «Երկրորդ օրն է, որ Տրապիզոն ենք: Երբ եկանք, թուրք պատգամավորները, տեսանք՝ այստեղ չեն եկել և այժմ ասում են, որ վաղը պիտի գան: Ուրեմն երկու օր մնում ենք պարապ: Մնացել ենք նավի վրա, քաղաք չենք իջել: Պատճառը հետևյալն է. մենք բերել ենք հետներս 50 զինվոր, իբրև մեր охрана կամ свита կամ караул. թուրքերը առաջարկեցին, որ կամ այդ զինվորները նավից դուրս չհանենք, կամ զենքերը թողնենք նավում: Մենք չընդունեցինք ոչ մեկը և ոչ մյուսը. ուստի մնացինք նավի վրա՝ սպասելով թուրք պատգամավորության գալուստին, որ կրկնեինք մեր պահանջը: Իսկապես, այդ զինվորների մենք ոչ մի կարիք չունեինք, բայց հարցը քաղաքական է… թուրքերը ուզում են նկատել Տրապիզոն քաղաքը արդեն իբրև թուրքական քաղաք, իսկ մենք ուզում ենք ասել, որ այդ քաղաքը դեռևս թուրքական չէ, քանի որ մենք գրավել ենք զենքով և պաշտոնապես ևս ետ չենք տվել: Փաստորեն քաղաքը արդեն թուրքական է, ռուս զորքը թողել գնացել է, ոչ ոք չի մնացել. թուրք զորքը մտել է քաղաք և վերահաստատել իր կառավարությունը[7]…»:

Ի վերջո, փետրվարի 27-ին Տրապիզոն հասավ թուրքական պատվիրակությունը, որը բաղկացած էր 5 անդամից՝ Թուրքիայի ռազմածովային ուժերի սպայակույտի պետ փոխծովակալ Ռաուֆ բեյի ղեկավարությանբ: Նույն օրն անդրկովկասյան պատվիրակությունը նավից իջավ ցամաք, և կայացան պատվիրակությունների ներկայացուցիչների փոխադարձ այցելություններն ու դրանց նախագահների հանդիպումները: Անդրկովկասի պատվիրակությունը թուրքերին արեց գրավոր հարցապնդում, թե Վեհիբ փաշայի կողմից Կարսը, Բաթումն ու Արդահանը պարպելու վերաբերյալ Անդրկովկասի կոմիսարիատին ուղղված պահանջը նշանակո՞ւմ է արդյոք՝ հրաժարվել բանակցությունների շարունակությունից: Գրավոր պատասխան չտալով՝ Ռաուֆ բեյը հայտարարեց, որ թուրքական պատվիրակության՝ Տրապիզոն գալը պայմանավորված է նրանով, որ Բ. Դուռը ցանկանում է բանակցություններ վարել Անդրկովկասի հետ, իսկ Վեհիբ փաշայի պահանջի մասին ոչինչ հայտնի չէ իրեն[8]: Առաջին իսկ օրը պատվիրակությունների բանակցություններում, մասնավոր հանդիպումներում և խորհրդակցություններում ակնհայտ դարձան Օսմանյան Թուրքիայի զավթողական նկրտումները, թուրքական պատվիրակության անդամների երեսպաշտությունը, խուսանավելը, հաճոյախոսությամբ և պերճախոսությամբ իրենց

---

[6] Հորիզոն, 26 IV, 1918:

[7] Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հ. Քաջազնունու ֆոնդ, N 4212, գ. 127, թ. 1:

[8] Հորիզոն, 24. IV. 1918:

նպատակներին հասնելու միտումները[9]: Այս հանդիպումների ընթացքում թուրքական պատվիրակության լիազորությունների մասին Ա. Չխենկելու հարցադրմանը Ռաուֆ բեյը պատասխանեց, որ թուրքերը հաստատ մտադիր են ընդառաջ գնալ Անդրկովկասյան կառավարությանը, և իրենց պատվիրակությունն ունի բոլոր լիազորություններն ու ցանկությունները՝ քննարկել «բոլոր հարցերը, որոնք կառաջադրվեն Անդրկովկասի կառավարության կողմից[10]», կնքել հաշտության և բարեկամության պայմանագիր: Փետրվարի 28-ին պատվիրակությունների առաջին համատեղ նիստում որոշվեց, որ Խ. Խասամադովը, Հ. Քաջազնունունին և գործերի կառավարիչ Մ. Թումանյանը, թուրք պատվիրակների հետ միասին, ճշտեն մարտի 1-ին կայանալիք պաշտոնական առաջին նիստի[11] օրակարգը: Պատվիրակությունների առաջին պաշտոնական նիստում [12], մարտի 1-ին, գրավոր հայտարարության մեջ Ռաուֆ բեյը հավաստեց, որ թուրքական պատվիրակությունը Տրապիզոն է եկել «հաշտություն և հավիտենական բարեկամություն կնքելու Անդրկովկասում կազմավորման ընթացքում գտնվող հանրապետության հետ[13]»: Կոնֆերանսի երկրորդ նիստում, մարտի 2-ին, թուրքական պատվիրակությունը կտրուկ մերժեց Ա. Չխենկելու առաջարկությունը՝ կոնֆերանսում հերթականորեն նախագահելու մասին: Անդրկովկասի պատվիրակությունը, մնալով Տրապիզոնի չեզոքության մասին իր կարծիքին և հայտարարելով, որ նախագահությունը պետք է հերթով հանձնվի երկու պատվիրակությունների նախագահներին, այնուամենայնիվ, չցանկացավ հարցը հասցնել կոնֆլիկտի: Նկատի ունենալով իր առաքելության կարևորությունը՝ խորհրդակցության բացումից առաջ նա հետ վերցրեց հերթական նախագահության մասին իր առաջարկը: Այդպիսով, Տրապիզոնը համարվեց թուրքական տարածք, իսկ անդրկովկասյան պատվիրակությունը՝ հյուր: Առաջին զիջումը դարձավ սկիզբ՝ թուրքերի մեթոդական ճնշման և անդրկովկասյան պատվիրակության մյուս առաջարկությունները ևս մերժելու համար: Թուրքական հարցադրումներին անդրկովկասյան պատվիրակության պատասխանում ասված էր, որ Անդրկովկասի էության, ձևի, քաղաքական և վարչական կառավարման հարցը առաջ է քաշվել նրա որոշման համար միակ իրավասու մարմնի՝ ժողովուրդների կամքի ազատ արտահայտությամբ, ստեղծված Անդրկովկասի Սեյմի կողմից՝ համընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա: Թուրքական պատվիրակության խնդրանքով անդրկովկասյան պատվիրակության հայտարարությունը հրապարակվեց և քննարկվեց կետ առ կետ, ինչն ապացուցում էր թուրքերի ձգտումը՝ խառնվելու Անդրկովկասի ներքին գործերին, թափանցելու նրա վարչական և քաղաքական կառուցվածքի մեջ: Այդ ձգտումը նկատեց և Ա. Չխենկելին, որը «միջազգային բանակցություններում ներքին բնույթի հարցերի» առաջքաշումը

---

9 **Ավետիսյան Հ. Ա.**, նշվ. աշխ., էջ 113:

10 ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 9, թ. 55-56 ա:

11 Նույն տեղում, թ. 67:

12 Կայացան 6 ընդհանուր նիստ և 2 մասնավոր խորհրդակցություն:

13 ՀԱԱ, ֆ. Պ-200, գ. 9, թ 61-65:

համարեց «անհարմար»[14]: Անդրադառնալով մարտի 3-ի նիստի օրակարգին, Ա. Խատիսյանն առաջարկեց այդ նիստում ավարտել թուրքական պատվիրակության ձեռնարկած քննությունը: Որոշվեց խնդրել օսմանյան պատվիրակությանը՝ ավարտել Անդրկովկասի կառուցվածքի հետ ծանոթությունը և հայտնել, որ բանակցությունների հիմքում դրվող սկզբունքի մասին հայտարարությունը պետք է հայտնվի ոչ ուշ, քան մարտի 4-ի առավոտյան ժամը 10-ը[15]: Սակայն թուրքական պատվիրակության՝ բանակցությունների ձգձգման քաղաքականությունը շարունակվում էր: Դրա նպատակը ռազմաճակատում առավելության հասնելով ուժի դիրքերից խոսելն էր: Եթե սկզբում Ռաուֆ բեյը հայտարարում էր սուլթանի կողմից բանակցություններ վարելու համար իր ունեցած լիազորությունների մասին, ապա այժմ պնդում էր, որ այդպիսիք չունի: Թուրքական պատվիրակությունն անընդունելի համարեց Բրեստ-Լիտովսկի դաշնագրի՝ Կովկասին վերաբերող մասի կապակցությամբ անդրկովկասյան պատվիրակության հիմնադրույթները՝ դա «հիմնավորելով» նրանով, որ կովկասյան կառավարությունը Բրեստ-Լիտովսկի դաշնագրի կնքման ժամանակ կազմավորված չէր և ոչինչ չէր արել իր անկախությունը մյուս պետություններին ճանաչել տալու համար: Այդ պատճառով Անդրկովկասի անկախությունը Թուրքիան չի ճանաչում: Նույն նիստում ելույթ ունեցավ Հ. Քաջազնունին և մասնավորապես ասաց. «Օսմանյան կառավարությունը կարծում է և մեզ համար պարտադիր է համարում Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագիրը և գտնում է, որ մենք այնքան էլ կազմակերպված և կողմնորոշված չենք, որպեսզի մասնակցենք միջազգային հարաբերություններին: Մենք չենք կարող համաձայնել այդպիսի հարցադրման հետ: Քանի որ մենք կանգնած ենք այդպիսի հակասության առաջ, մենք պետք է հարցում անենք, թե պե՞տք է արդյոք օսմանյան պատվիրակության առաջարկությունը վերջնական դիտարկել: Ինչպես երևում է, մեր լիազորությունները բավարար չեն, որպեսզի բանակցությունները վարենք այդ հարթությունում: Մենք պետք է հարաբերվենք Սեյմի հետ և նոր հրահանգներ ստանանք: Քանի որ օսմանյան պատվիրակությունը չի ճանաչում մեր հայտարարության հիմնական կետերը, մենք որոշակիորեն պետք է մեր բանակցությունների ընթացքն արագացնելու համար հարցնենք օսմանյան պատվիրակությանը, թե նրանք ի՞նչ են մտադիր առաջարկել անդրկովկասյան պատվիրակությանը և ո՞րն է լինելու հենակետը՝ նոր բանակցություններ վարելիս[16]»: Սակայն թուրքական պատվիրակությունը գրավոր հատուկ հայտարարությամբ անդրկովկասյան պատվիրակությանը խնդրեց սահմանել և հռչակել անդրկովկասյան կառավարության պաշտոնական ձևը, պետության սահմանները, տարածքը, լեզուն և կրոնը, ինչպես նաև «հատուկ սահմանել անկախ կառավարության դիրքորոշումը և վերաբերմունքը Օսմանյան կայսրության նկատմամբ»[17]: Թուրքական պատվիրակության առաջադրած

[14] Նույն տեղում, թ. 159:
[15] Նույն տեղում, թ. 78-78 ա:
[16] Նույն տեղում, թ. 81:
[17] Նույն տեղում, թ. 74-74 ա:

հարցերի պատասխանները մշակվեցին անդրկովկասյան պատվիրակության՝ մարտի 3-6-ի նիստերում և հրապարակվեցին բանակցությունների չորրորդ նիստում՝ մարտի 7-ին: Հետաքրքրքրական է մարտի 4-ի նիստը, որտեղ, Հ. Քաջազնունին առաջ է քաշում հետևյալ առաջարկությունը. «Մեր դիրքորոշումը Օսմանյան կայսրության հանդեպ կողմնորոշվում է այսպես. այս պահին անդրկով-կասյան կառավարությունը օսմանյան կառավարության հետ գտնվում է զինադադարի մեջ և ցանկանում է կնքել ամուր խաղաղություն, որպեսզի վերականգնվեն բարիդրացիական հարաբերությունները Թուրքիայի և Ռուսաստանի միջև, որը խախտվել էր պատերազմի հետևանքով[18]»: Թուրքական պատվիրակության երկդիմի քաղաքականությունը բացահայտվեց բանակ-ցությունների հինգերորդ նիստում՝ մարտի 8-ին: Անդրկովկասյան պատվի-րակությունը, մնալով նախկին տեսակետին, այդ նիստում թուրքական պատվիրակությանն առաջարկեց սեյմի փետրվարի 17-ի մշակած սկզբունքները (4 կետ) և կրկնեց իր հայտարարությունը, որ անկախ Անդրկովկասի պետության կողմից հաշտության նվիրագործումով պիտի կատարվեն միջազգային իրավունքով պահանջված բոլոր ձեռնարկությունները: Օսմանյան պատվի-րակությունը զայրույթով հանդես եկավ 1918 թ. փետրվարի 17-ին հաշտության պատվիրակությանը Անդրկովկասի սեյմի տված հրահանգների՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարության վերաբերյալ 4-րդ կետի դեմ: Նա անդրկովկասյան պատվիրակության հայտարարությունը դիտեց որպես Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու ցանկություն, և հայտարարեց, որ Կովկասյան Հանրապետության վերջնական ու պաշտոնական ճանաչումը կարող է տեղի ունենալ միայն կնքվելիք դաշնագրում մտցվելիք որոշ կետով, և դրա շուրջ բանակցությունները կարող են սկսվել միայն Բաթումի, Արդահանի և Կարսի սանջակների նկատմամբ բոլոր հավակնություններից հրաժարվելուց հետո: Ռաուֆ բեյը հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի անդառնալիության փաստը՝ բացառելով Կարսի, Արդահանի և Բաթումի հարցերի քննարկումը: Հետաքրքիր են Ա. Խատիսյանի հուշերը, որոնցում նա նշում է, թե ինչ կարծիք է հայտնել Ռաուֆ բեյը Հայկական հարցի վերաբերյալ: Ռաուֆ բեյը գտնում էր, որ եթե Անդրկովկասի կառավարությունը ցանկանում է բարեկամություն հաստատել և խաղաղություն կնքել Թուրքիայի հետ, ապա պետք է տարածքային զոհ տա և մի կողմ դնի Հայկական հարցն ընդհանրապես: Ա. Խատիսյանի այն հայտարա-րությանը, որ առանց Հայկական հարցի լուծման չի կարելի հանգստացնել Կովկասը, Ռաուֆ բեյը նկատեց, որ երբ խաղաղությունը կնքվի, այն ժամանակ էլ օսմանյան կառավարությունը վավերագիր կհրապարակի հայ փախստականների վերադարձի մասին: Ճիշտ է, ասաց նա, հայերդ ասում եք Հայաստանի ինքնավարություն Թուրքիայի կազմում, բայց դա վաղուց հայտնի նախապայման է դեպի անկախություն, այդպես եղել է թուրքական վիլայեթների հետ

[18] Նույն տեղում թ, 167-169 ա:

Բալկաններում[19]: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար երկու պատվիրակությունների փոխադարձ համաձայնությամբ հայտարարվեց խորհրդակցության նիստերի դադար՝ մինչև իրենց կառավարություններից նոր հրահանգներ ստանալը: Որոշվեց դիմել իրենց կառավարություններին՝ նոր հրահանգներ ստանալու համար: Բանակցություններն առժամանակ դադարեցին: Այսուհանդերձ, անդրկովկասյան պատվիրակության նիստերը և հարցերի քննարկումները շարունակվում էին: Մարտի 7-ի և 8-ի նիստերում մուսուլմանական պատվիրակներն առարկեցին Հ. Քաջազնունու առաջարկությանը՝ բանակցությունները դադարեցնելու, Թիֆլիս վերադառնալու և բանակցությունների համար ավելի հարմար վայր ընտրելու մասին [20]: Սակայն Ա. Չխենկելին, Ա. Խատիսյանը, և Գ. Լասխիշվիլին կարծում էին, որ ոչ մի հիմք չկա մնալու Տրապիզոնում: Երկար վիճաբանությունից հետո որոշվեց սեյմին ու կառավարությանը զեկուցելու համար Թիֆլիս ուղարկել պատվիրակություն՝ հետևյալ կազմով. Գեորգի Լասխիշվիլի՝ մենշևիկների, ազգային դեմոկրատների և սոցիալ ֆեդերալիստների կողմից, Ռուբեն (Հովհաննես) Քաջազնունի՝ դաշնակցության կողմից, Իբրահիմ բեկ Հայդարով՝ մուսուլմանական կուսակցությունների կողմից: Մարտի 9-ին պատվիրակությունը մեկնեց Թիֆլիս: Մարտի 12-ին Թիֆլիսում սեյմի նախագահության, խմբակցությունների ներկայացուցիչների և Անդրկովկասի կառավարության համատեղ նիստում [21] Հ. Քաջազնունին հանդես եկավ զեկուցումով, որտեղ անդրադարձավ նաև Թուրքահայաստանի ինքնավարության հարցին: Գ. Լասխիշվիլին արձանագրեց, որ թուրքերը լիազորված չէին վարել հաշտության բանակցություններ և Թուրքահայաստանի ինքնավարության հարցում անզիջում էին: Երկար լսումներից ու քննարկումներից հետո նիստը որոշեց. «Կանգնելով Սեյմի որոշումների վրա, ցանկանալով հասնել Անդրկովկասյան կառավարության և Թուրքիայի համար ընդունելի պատվավոր հաշտության, հաշտության պատվիրակության նախագահին «տալ արտակարգ լիազորություններ՝ անկախորեն անելու հարկ եղած քայլերը, երկու կողմերի համար պատվավոր հաշտության հանգելու համար»[22]: Պատվիրակության մնացած անդամներն այդ որոշման հիման վրա մնացին խորհրդականի կարգավիճակում: Վերոգրյալ որոշման մասին անմիջապես հաղորդվեց Տրապիզոն: Սեյմի մուսուլման պատվիրակներն այս լուրն ընդունեցին դժգոհությամբ: Մարտի 18-ի նիստում նոր տարաձայնություններ առաջացան, մասնավորապես Թուրքահայաստանի ինքնավարության հարցում: Այս կապակցությամբ զեկուցումով հանդես եկավ Ա. Խատիսյանը: Պնդելով այս հարցի լուծման անհրաժեշտությունը՝ նա առաջ քաշեց տարածքային, բռնագաղթվածների վերադարձի և բնակեցման, ինքնավար Թուրքահայաստանի իրավունքների հարցերը: Նա պնդում էր, որ պատվիրակությունը պետք է ձգտի Թուրքահայաստանի ինքնավարությանը, թեկուզ տարածքի խիստ որոշակի

[19] Նույն տեղում, գ. 8, թ. 105:
[20] Նույն տեղում, գ. 9. թ. 93-94 :
[21] **Ավետիսյան Հ. Ա.,** նշվ. աշխ., էջ 123-124:

սահմաններում, և ապահովվի միջազգային երաշխիք՝ Գերմանիայի, Անդրկով-կասյան պետության և հենց իր՝ Թուրքիայի կողմից: Կատարելով լրացումներ՝ Հ. Քաջազնունին անհրաժեշտ էր համարում, որպեսզի հաշտության պայմանագիրը կնքելու հետ սուլթանը հռչակեր Թուրքահայաստանի ինքնավարությունը՝ Թուրքիայի հովանու տակ, ընդունելով, որ ինքնավար Թուրքահայաստանը սուլթանին վճարում է տարեկան հարկ, ունի իր սեփական կառավարությունը, ոստիկանությունը[23]: Սակայն Թուրքահայաստանի ինքնավարության հարցերի քննարկման դեմ հանդես եկած մուսուլման պատվիրակների և նրանց համախոհների կշռանժարն ավելի ծանր էր[24]: Գ. Գվազավան Ա. Խատիսյանի և Հ. Քաջազնունու հարցադրումները համարեց «իրենց մաքսիմալ պահանջների որոշակիությամբ հեռուն գնացող», իրողության հետ հաշվի չնստող ցանկություն և առաջարկեց ընդհանրապես հանել 4-րդ կետը՝ դրանում տեսնելով «միակ ելքը՝ ստեղծված վիճակից»[25]: Նրան անմիջապես արձագանքեցին Խ. Խասամադովը և մյուս մուսուլման պատվիրակները: Լարված էր մարտի 21-ի նիստը, որտեղ Ա. Չխենկելին ներկայացրեց իր առաջարկները՝ Թուրքիային զիջումների հարցում. դրանք էին՝ հանձնել 1. ամբողջ Օլթիի օկրուգը, 2. Արդահանի օկրուգի մեծ մասը, 3. Կարսի օկրուգը՝ Բեգլի Ահմեդի գծով ցած, 4. Կաղզվանի օկրուգը, առանց Կաղզվան քաղաքի և նրա հյուսիսային մասի: Տարածքային զիջումների վերաբերյալ ներկայացված նախագծի դեմ առաջինը վճռական հանդես եկավ Հ. Քաջազնունին: Նա հիմնավորված պնդում էր, որ Կարսի և Կաղզվանի օկրուգների ազգաբնակչության մեծամասնությունը կազմող հայերը, ռուսները և հույները չեն ցանկանում միավորվել Թուրքիայի հետ, մինչդեռ պատվիրակության ղեկավարը, Թուրքիային չհանձնելով Արդվինի օկրուգը, առաջին հերթին հանձնում է Կարսի ու Կաղզվանի օկրուգների մասերը՝ քրիստոնյա բնակչությանը դնելով անելանելի վիճակի մեջ: Ըստ Հ. Քաջազնունու, «նրանք պետք է կամ ապրեն նրանց հետ, ում հետ չեն ուզում և չեն կարող ապրել, կամ էլ դուրս գան հայրենիքի տարածքից, թողնեն տնտեսությունը և շարժվեն ինչ-որ տեղ»[26]: Հ. Քաջազնունին կարծում էր, որ այդպես վարվելով՝ պատվիրակությունը հրաժարվում է իր իսկ հռչակած ժողովրդավարական սկզբունքից, թույլ է տալիս խոշոր սխալ: Դիմելով Ա. Չխենկելուն և նրա համախոհներին՝ նա ասաց. «Վրաստանի համար դուք ցանկանում եք պահպանել պաշտպանության մեկ գոտի ևս. ցանկանում եք Բաթումի օկրուգի թիկունքում ունենալ նաև Արդվինի, Ախալցխայի և Ախալքալաքի գավառները, թիկունքում՝ Արդահանը: Մինչդեռ, հանձնելով Կարսի և Կաղզվանի օկրուգների մի մասը, ոչ միայն առաջ եք շարժում թուրքական սահմանները դեպի հայկական մարզերի դռները, այլև կտրում եք այդ մարզերից աշխարհագրական, տնտեսական, ազգագրական անբաժանելի մասերը[27]»:

[23] Նույն տեղում, թ. 110-112:
[24] Նույն տեղում, թ. 112 ա:
[25] Նույն տեղում, թ. 113:
[26] Նույն տեղում, թ. 127:
[27] Նույն տեղում, թ. 127 ա:

Սակայն, ինչպես միշտ, բավարարված լինելով Ա. Չխենկելու առաջարկություններով, Մ. Հաջինսկին և Խ. Խասմամեդովը նրան խորհուրդ տվեցին գործել ինքնուրույն, առանց քվեարկության, քանզի «կարծիքները հիմնովին հակասական են»[28]: Բանակցությունները փակուղի չմտցնելու համար Հ. Քաջազնունին և Ա. Խատիսյանն օրակարգից հանեցին Թուրքահայաստանի ինքնավարության մասին հարցապնդումը: Նման իրավիճակում Հայկական հարցի քննարկումը փաստորեն փակվեց, և թուրքական կողմը պահանջ դրեց վերադարձնել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով իրենց տրված Կարսի, Կաղզվանի, Արդահանի և Բաթումի օկրուգները: Այս հարցում էլ Թուրքիային սատար կանգնեցին Անդրկովկասի մուսուլման պատվիրակները՝ հայտարարելով, որ հակառակ դեպքում, եթե Թուրքիայի հետ պատերազմ սկսվի, ապա մուսուլմանները չեն մասնակցի: Մուսուլման պատվիրակների դավաճանական վարքագիծը ոչ միայն օժանդակեց հայկական տարածքների կորստին, այլև արագացրեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և անկախացնելու գործընթացը: Նրանց հետ միակամ հանդես եկան վրացիները՝ պատվիրակության ղեկավար Ա. Չխենկելու գլխավորությամբ: Վրացիների վարքագծում բնորոշն այն էր, որ նրանք ամեն կերպ ձգտում էին թուրքերին հանձնել Կարսի մարզը՝ փոխարենը Անդրկովկասի կազմում պահպանելով Բաթումի մարզը: Այնուամենայնիվ, Ա. Չխենկելին չկարողացավ հասնել իր նպատակին. թուրքերը պնդեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի անվերապահ կատարման վրա: Եթե նկատի ունենանք, որ Տրապիզոնում բանակցող անդրկովկասյան պատվիրակության 14 անդամներից 7-ը մուսուլման էին, ապա պարզ կդառնա, որ հայ երկու պատվիրակները՝ Հ. Քաջազնունին և Ա. Խատիսյանը, չէին կարող դիվանագիտական ասպարեզում որևէ դեր խաղալ, ուստի և ինչ էլ անեին, միևնույն է՝ չէին կարող հարցերի քննարկման և ընդունման գործում քիչ թե շատ ազդեցություն ունենալ և խնդիրները հայանպաստ հանգրվանի հասցնել: Բանակցություններ վարելու աննպաստ հանգամանքներից մեկն էլ այն էր, որ այդ ամբողջ ընթացքում ռազմական հաջողություններն ուղեկցում էին թուրքերին: Դեռ բանակցությունները չսկսած՝ հայտնի դարձավ, որ թուրքերը գրավել են Էրզրումը: Տրապիզոնի բանակցությունների վերջնափուլում հայ պատվիրակները, առավել ևս՝ թաթար և վրացի պատվիրակները, հանգում են Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը ճանաչելու եզրակացությանը՝ իբրև չարյաց փոքրագույնի: Այս կապակցությամբ Հ. Քաջազնունին մարտի 26-ի նիստում հայտարարում է. «Ես կարծում եմ, որ ավելի լավ է ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, քան տալ անվերադարձ այն, ինչ որ հիմա դուք տալիս եք[29]»: Իսկ մարտի 28-ին նա հեռագրում է սեյմի դաշնակցական ֆրակցիային՝ «Անհրաժեշտ ենք նկատում հրավիրելու Հ. Հ. Դաշնակցության ամենալուրջ ուշադրությունը այն բանի վրա, որ ստեղծված պայմաններում Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ընդունումը պետք է

[28] Նույն տեղում, թ. 129:

[29] Նույն տեղում, թ. 134 - 139:

համարել փոքրագույն չարիք[30]»: Ստեղծված պայմաններում Թուրքիայի հետ հարաբերությունների խնդրում Հ. Քաջազնունին արտահայտվում էր հաշտության և մերձեցման օգտին: Նույն կարծիքին էր նաև Ա. Խատիսյանը: Ինչ վերաբերում է Հ. Քաջազնունու կողմնորոշմանը, ապա նա դա բացատրում էր նրանով, որ ինքը փորձում էր կանխել թուրքական ներխուժումը: Սակայն անդրկովկասյան կառավարությունները հրաժարվում են ճանաչել Բրեստի պայմանագիրը և իրենց պատվիրակությունից պահանջում են ապրիլի 1-ին վերադառնալ Տրապիզոնից: Ուսումնասիրելով Տրապիզոնի հաշտության բանակցությունների նիստերի արձանագրությունները՝ գալիս ենք այն եզրակացության, որ հայ պատվիրակները, ստիպված լինելով համերաշխել թաթար և վրացի պատվիրակների դիրքորոշման հետ, տարածքային–սահմանային խնդիրներում գրավել են ինչ-որ առումով հասկանալի զիջողական դիրք, բայց տուրք չեն տվել թուրքական կողմնորոշմանը, ինչպես գտնում էին որոշ պատմաբաններ և քաղաքական գործիչներ: Հարկ է նշել, որ Հ. Քաջազնունին շրջահայաց և իրատես քաղաքական գործիչ էր: Թերևս, կարելի էր առավել կոշտ դիրք գրավել, քանզի Թուրքիան իր տարածքային պահանջներին ցանկանում էր գոհացում տալ սոսկ հայկական հողերի հաշվին: Այնուամենայնիվ, Հ. Քաջազնունու գործն ու դերը նշանակալի էին այս բանակցություններում:

ОГАНЕС КАЧАЗНУНИ В ТРАПЕЗУНДСКОМ МИРНОМ ПЕРЕГОВОРЕ

МАРТИРОСЯН Г. В.

Резюме

В 1918 г. в Трапезунде шли переговоры между делегацией Закавказского Сейма, с одной стороны, и турецкой – с другой. В числе закавказской делегации были два армянских представителя – О. Качазнуни и А. Хатисян. Из 14 членов делегации семеро были мусульманами, которые всячески поддерживали турок. Из этого следует, что на политической арене два армянских делегата не могли играть существенной роли и повлиять на ход событий для решения вопроса в пользу армян. Однако О. Качазнуни попытался спасти положение и по возможности сохранить спорные территории. В создавшейся ситуации О. Качазнуни высказался за мир и сближение с Турцией и за принятие Брест – Литовского мирного договора. Позиция О. Качазнуни объяснялась попыткой предотвратить турецкое вторжение. Будучи крайне осмотрительным и реальным политическим деятелем, в приграничнo – территориальном вопросе он пошел на уступки, не придерживаясь при этом турецкой ориентации.

[30] **Վրացյան Ս.,** նշվ. աշխ., էջ 100: